

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԵՎԱՆՅԱՆ ՍՈՆԱ ՎԱՉԻԿԻ

ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք - քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

Երևան-2012

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ТЕВАНЯН СОНА ВАЧИКОВНА

**ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ
КОНЦЕССИОННОГО ДОГОВОРА**

АФТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности: 12.00.03-“Частное право- гражданское, предпринимательское, международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

Ереван-2012

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Տ.Կ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր Ա.ՅՈՒ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ա.Գ. ՄԵՂՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. նոյեմբերի 9-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2012 թ. հոկտեմբերի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук,
профессор Т.К. БАРСЕГЯН

Официальные оппоненты: доктор юридических наук А.Ю. МКРТУМЯН

кандидат юридических наук
доцент С.Г. МЕГРЯН

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 9-ого ноября 2012 г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК-а 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 9-ого октября 2012 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А.Г. Вагаршян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Քաղաքակրթության ժամանակակից դինամիկ զարգացման պայմաններում առանձին երկրների միջև գոյություն ունեցող կապերի սերտացման հետևանքով ի հայտ են գալիս համագործակցության նորաճող սապարեզներ: Առաջընթաց զարգացումները թելադրում են այդ համագործակցության նորագույն և առավել արդյունավետ ուղիների մշակման անհրաժեշտություն: Այդ ուղիներից մեկն էլ ներդրումների, հատկապես օտարերկրյա, իրականացումն է, որը կիրառելի է ինչպես զարգացած պետությունների հարաբերություններում, այնպես էլ զարգացող երկրներում: Ժամանակակից պետությունները խնդիր ունեն նաև մշակելու պետություն-մասնավոր համագործակցության առավել արդյունավետ կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան թույլատրել ու խրախուսել մասնավոր կապիտալի, ինչպես նաև կառավարչական հմտությունների ու մարդկային ռեսուրսի մուտքը պետական բացառիկ սեփականության կառավարման կամ մենաշնորհային լիազորությունների պատվիրակման ոլորտ՝ միաժամանակ պահպանելով դրանց նկատմամբ պետության բացառիկ սեփականությունը կամ մենաշնորհային դիրքերը: Այդպիսով հնարավոր կլինի ապահովել տնտեսության ռազմավարական կամ խոցելի վիճակում գտնվող ոլորտների արդյունավետ կառավարումը մասնավոր ներդրումների ներգրավմամբ՝ զուգահեռաբար պահպանելով պետության, որպես սեփականատիրոջ, իրավազորությունները: Չարգացող երկրներից շատերը, որպես մատնանշված խնդրի լուծման ուղի, նախապատվություն են տալիս պետություն-մասնավոր համագործակցության կոնցեսիոն կառուցակարգին: Միաժամանակ, կոնցեսիոն հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է այն՝ օտարերկրյա ներդրողների համար գրավիչ ու ապահով դարձնելու կարևորագույն խնդիրը նկատի ունենալով: Հաշվի առնելով կոնցեսիոն կառուցակարգի նշանակությունը ենթակառույցների և ընդհանրապես տնտեսության զարգացման հարցում՝ երկրներից շատերը հակված են ապահովելու մասնավոր ոլորտի գործառնումը այդ բնագավառում՝ նոր օրենսդրության մշակմամբ և համապատասխան ֆինանսական միջոցների ներգրավմամբ¹:

Կոնցեսիոն հարաբերությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը գործնականում իրականացնում է ոչ ամբողջական և ոչ լիարժեք կարգավորում. չկա այդ ոլորտը կարգավորող միասնական իրավական ակտ, որից կարող են բխել հարակից ակտերի կարգավորման ուղղությունները և հիմնական սկզբունքները: Այս իրավիճակը, սակայն, չի խանգարել գործնականում Հայաստանի Հանրապետությունում կոնցեսիոն հարաբերությունների ձևավորման և դրանց պայմանագրային կարգավորման գործընթացին, որպես դրա վառ օրինակ կարող ենք նշել երկաթուղու համակարգը, օդանավակայանը կոնցեսիոն կառավարման հանձնելու փաստերը: Այդուհանդերձ, սակավաթիվ չեն նաև այն դեպքերը, երբ կողմերի՝ ըստ էության կոնցեսիոն հարաբերությունները, կարգավորվում են այլ իրավական կառուցակարգերով՝ թույլտվության ինստիտուտի կամ լիցենզային պայմանագրի կիրառմամբ, օրինակ ընդերքօգտագործման բնագավառում, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրերի կնքմամբ: Այսինքն՝ այս ինստիտուտի վերաբերյալ լիարժեք իրավա-

¹St'u J.Luis Guash, Granting and renegotiating infrastructure concessions: Doing it right, The World Bank, Washington, 2004, էջ 6:

կան ակտերի բացակայությունը մղում է, ըստ էության, կոնցեսիոն բնույթի հարաբերություններն այլ իրավական կառուցակարգերի միջոցով կարգավորելուն, որոնք, սակայն, չունեն այն արդյունավետությունն ու իրավական կշիռը, ինչը բնորոշ է կոնցեսիային:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ գնահատելով ստեղծված իրավիճակը՝ կարող ենք միանշանակ պնդել, որ կոնցեսիոն հարաբերությունների զարգացման և գործնական կիրառության աստիճանը հրատապ է դարձնում կոնցեսիայի պայմանագրի, որպես իրավական ինստիտուտի, տեսական ուսումնասիրության և իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ սույն պայմանագրերի կիրառման ոլորտի առանձնահատկությունները և երկրի տնտեսության համար ունեցած նշանակությունը պահանջում են պատշաճ իրավական կարգավորվածություն՝ ապահովելով գիտական և գործնական առումներով հիմնավորված օրենսդրության առկայություն, որը կնախատեսի ոլորտի հիմնախնդիրների լուծման հուսալի կառուցակարգեր:

Կոնցեսիոն հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում տեղի է ունենում հանրային և մասնավոր հետաքրքրությունների (շահերի) փոխներթափանցում: Այդ առումով կարևոր է սահմանել մասնավոր կապիտալի ներգրավմամբ ձևավորվող հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում հանրային շահերի ներառման առավելագույն թույլատրելի սահմանը, որից այնպիսի մասն միջամտությունը կարող է դիտվել որպես մասնավոր հետաքրքրությունների ճնշման միջոց: Գիտնականները հաճախ ընդգծում են այն հանգամանքը, որ կոնցեսիոն հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական մեկ առանձին ակտի առկայությունն իսկ նպաստում է տվյալ երկրի ներդրումային մթնոլորտի բարելավմանը, քանի որ այդպիսով նախադրյալներ են ստեղծվում պետության և ներդրողի միջև հուսալի քաղաքացիաիրավական հարաբերությունների ձևավորման համար:

Վերջին 15-20 տարիների ընթացքում կոնցեսիոն հարաբերությունները, որպես պետության և մասնավորի համագործակցության արդյունավետ կառուցակարգ, մխրճվել են տնտեսական և սոցիալական ենթակառույցների ոլորտ աշխարհի շատ երկրներում: Թեմայի արդիականությունը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից պետությունն էականորեն փոփոխում է տնտեսական և հասարակական կյանքին իր մասնակցության ռազմավարական ուղղությունները և ներկայումս մեծ ծավալներ է ստանում մասնավոր հատվածի գործարարական և ֆինանսական կապիտալի մասնակցությունը տնտեսության այն ոլորտներում, որոնք նախկինում հանդիսանում էին պետության բացառիկ մենաշնորհը: Այդպիսով, պետությունն իր գործառույթներից մի քանիսը մասնավոր սուբյեկտներին պատվիրակելու արդյունքում, հնարավորություն է ստանում իր ուշադրությունը սևեռել այն նոր գործառույթների վրա, որոնք անխուսափելի են գլոբալիզացիայի ժամանակաշրջանում գտնվող սոցիալական պետության համար: Բացի այդ, պետության և մասնավորի համագործակցության հիման վրա և դրա շրջանակներում մասնավոր սեկտորի ներգրավումը պետական տնտեսության ոլորտ հնարավորություն է տալիս խնայել պետական բյուջեյի միջոցները, իսկ պետության հետ հարաբերությունների ձևավորման համար մասնավոր գործընկերոջ ընտրության մրցութային եղանակի շնորհիվ նախկինում պետական մենաշնորհային ոլորտներում մրցակցության, հետևաբար նաև որակական առումով համագործակցության առավել նպաստավոր տարբերակ ընտրելու, հնարավորություն է ընձեռվում: Ավե-

լին, ինչպես ցույց է տալիս շատ երկրների փորձը, գործարարության և շուկայական հարաբերություններում մեծ փորձ ունեցող մասնավոր ընկերությունների կազմակերպական հմտությունների ներգրավումը որոշ սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում, հնարավորություն է տալիս հաղթահարելու պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող ենթակառույցների գործունեության անարդյունավետության հիմնախնդիրը: Ի վերջո՝ մասնավոր կազմակերպությունների կոնցեսիոն գործունեության նկատմամբ հանրային իշխանության մշտական հսկողությունը հնարավորություն է տալիս պահպանել պատվիրակված կառավարման սոցիալական առաջնահերթությունները, և այդպիսով պետությունը շարունակում է պատասխանատվություն կրել հասարակության կենսականորեն կարևոր հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարման համար: Այսպիսով՝ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի ավելանան կոնցեսիայի պայմանագրի վերաբերյալ գիտագործնական ուսումնասիրությունները, քանի որ դրանով հնարավոր կլինի բացահայտելու ոլորտի առավել խնդրահարույց կողմերը և ապահովելու իրավական կարգավորման նպատակաուղղվածությունն ու արդյունավետությունը: Այդ խնդիրների իրականացման նպատակով էլ սույն ատենախոսության շրջանակներում մեր կողմից կատարվել է համապատասխան ոլորտի ուսումնասիրություն՝ այլ երկրների օրենսդրական և պրակտիկ փորձի հիման վրա, և ներկայացվել են հիմնավորված առաջարկներ ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման և անհրաժեշտ իրավական կարգավորումների իրականացման համար:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Ատենախոսության թեմայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում մենագրական բնույթի ուսումնասիրություններ չեն կատարվել և այլ ատենախոսություններ չեն պաշտպանվել:

Հետազոտության թեմայի վերաբերյալ հիմնարար աշխատություն է հանդիսանում Ս.Ա.Սոսնայի «Կոնցեսիոն համաձայնագիր. տեսություն և պրակտիկա» մենագրությունը (2002): Մեր հետաքրքրությունների առարկա հանդիսացող մի շարք հիմնախնդիրների անդրադարձ է կատարվել «Կոնցեսիոն համաձայնագիր. իրավական կարգավորումը» (Օ.Ն.Սավինովա, 2006), «Կոնցեսիոն համաձայնագրերը տեղական ինքնակառավարման մարմինների կոմունալ սեփականության ոլորտում» (Ա.Ե.Լեվիցկայա, 2008), «Կոնցեսիոն համաձայնագրերի քաղաքացիաիրավական կարգավորումը» (Ռ.Մ.Ժեմալետդինով, 2008), «Կոնցեսիոն համաձայնագիրը՝ որպես քաղաքացիաիրավական ինստիտուտ» (Վ.Մ. Սավիլևա, 2011), խորագրերով ռուս հեղինակների ատենախոսություններում:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել հայ իրավագետներ Տ.Կ.Բարսեղյանի, Ա.Ա.Հայկյանցի և Գ.Հ.Ղարախանյանի աշխատությունները, ռուս գիտնականներ Ս.Ս.Ալեքսեևի, Մ.Ի.Բրազդինսկու, Ա.Մ.Գուլյակի, Լ.Գրոսի, Ն.Գ.Դորոնինայի, Վ.Ա.Դոզորցևայի, Ի.Կ.Դրոզդովի, Ի.Վ.Երշովայի, Ռ.Մ.Ժեմալետդինովի, Օ.Ս.Իոֆֆեի, Ի.Ա.Իսակի, Ե.Ա.Լեվիցկայայի, Լ.Ա.Լունցի, Ա.Վ.Կարրասի, Ա.Գ.Կալպինի, Վ.Գ.Կարպովիչի, Բ.Գ.Կլյուկինի, Մ.Ի.Կուլագինի, Ա.Ի.Մալյակի, Վ.Պ.Մոզովինի, Ս.Մորոզի, Ս.Ի.Նովիցկու, Գ.Ֆ.Շերշենևիչի, Խ.Ի.Շվարցի, Վ.Ն.Շտերերի, Ա.Ռ.Ռուսինովայի, Օ.Ն.-Սավինովայի, Վ.Մ.Սավիլևայի, Ա.Պ.Սերգեևի, Ս.Ա.Սոսնայի, Ե.Ա.Սուխանովի, Ժ. Վեդելի, Ս.Ի.Վիլյանսկու, Վ.Վ.Վիտրյանսկու, Յու.Կ.Տոլստոյի և այլ հեղինակների, ինչպես նաև, Ջ.Լ.Գուաշի, Մ. Կլեյների, Ջ.Ֆ Շիհաթայի, Սթիվեն Վան Գրեյսի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքն են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը (ուժը կորցրել է 01.01.2012թ.), «Ավիացիայի մասին», «Տրանսպորտի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքները, ոլորտին առնչվող կառավարության մի շարք որոշումներ, ինչպես նաև այս հարցի վերաբերյալ արտասահմանյան մի շարք երկրների, մասնավորապես Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Իսպանիայի և այլ երկրների քաղաքացիական և կոնցեսիոն օրենսդրությունները, Եվրամիության կողմից ընդունված մի շարք դիրեկտիվներ:

Հետազոտության առարկայի փորձառնական (եմպիրիկ) հիմքն են կազմել ատենախոսության թեմային առնչվող Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքված կոնցեսիոն պայմանագրերը, մասնավորապես «Հայաստանի Հանրապետության կառավարության և «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» միջև կնքված պայմանագիրը, որով կոնցեսիոն կառավարման է հանձնվել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը, «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագիրը, որոնց վերաբերյալ ընդունվել են համապատասխանաբար ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 8-ի № 17 և 2008թ. փետրվարի 8-ի № 83-Ա որոշումները, ինչպես նաև ընդերք օգտագործման բնագավառի պայմանագրերի, ինչպես օրինակ Թեղուտի և Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի շահագործման պայմանագրերի, կնքման համար հիմք հանդիսացած կոնցեսիոն պայմանագրի օրինակելի ձևը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 31-ին ընդունված № 989-Ն որոշմամբ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր՝ դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, լեզվատրամաբանական մեթոդները, այնպես էլ մասնավոր մեթոդները՝ իրավահամեմատական, ձևական-իրավաբանական, համակարգակառուցվածքային վերլուծության, դոկտրինալ մեկնաբանման և գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդներ:

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում կոնցեսիայի պայմանագիրը՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի ինքնուրույն տեսակ:

Հետազոտության առարկան են հանդիսանում կոնցեսիայի պայմանագրի հիման վրա ծագող պետություն-մասնավոր համագործակցությունը, պայմանագրի կողմերի հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի, դրանց կիրառման կառուցակարգերի առանձնահատկությունները, ինչպես նաև կոնցեսիայի պայմանագրի կնքման, կատարման և դադարման ընթացակարգերում առկա թերություններն ու բացերը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը կոնցե- սիոն պայմանագրի, որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագրի, տե- սագործնական ուսումնասիրությունն է, դրա իրավական բնույթի բացահայտումը, կոն- ցեսիայի պայմանագրի առանձին տեսակների ուսումնասիրությունը, դրանց դասա- կարգման, կնքման, կատարման և դադարման ընթացակարգերի հետազոտումը և այդ ամենի հիման վրա որոշակի եզրահանգումներ և առաջարկներ ներկայացնելը, որոնք ուղենիշ կհանդիսանան Հայաստանի Հանրապետությունում կոնցեսիոն հարաբերու- յունների իրավական կարգավորում իրականացնելու համար: Այս նպատակներին հաս- նելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

✓ համեմատել և վերլուծել *կոնցեսիա* և *կոնցեսիոն պայմանագիր* հասկացու- յունները, դրանց հարաբերակցությունը և նշանակությունը պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը միջնորդավորելու գործում,

✓ բացահայտել կոնցեսիոն պայմանագրի իրավական էությունը և դրա հիման վրա որոշել դրա պատկանելությունն իրավունքի այս կամ այն ճյուղին,

✓ ուսումնասիրել կոնցեսիոն պայմանագրի և կոնցեսիոն հարաբերությունների ի- ռավական կարգավորվածության աստիճանը Հայաստանի Հանրապետությունում և բացահայտել իրավակարգավորման հնարավոր ուղղությունները,

✓ բացահայտել կոնցեսիոն պայմանագրի առանձնահատկությունները, որպես քաղաքացիաիրավական պայմանագրի ինքնուրույն տեսակ՝ համեմատելով այն քա- ղաքացիաիրավական այլ պայմանագրերի հետ և վեր հանելով դրանց նմանություն- ներն ու տարբերությունները,

✓ հետազոտել կոնցեսիայի առանձին տեսակների յուրահատկությունները և դրանք, ըստ տարբեր չափանիշների, առանձին խմբերում միավորելը և համապատաս- խան դասակարգումներ առաջարկելը,

✓ ուսումնասիրել կոնցեսիայի պայմանագրի հնարավոր օբյեկտների շրջանակը և տանաջատել դրանք պայմանագրի առարկայից,

✓ քննարկել կոնցեսիայի պայմանագրի բովանդակության ծավալը, առանձնա- հատկությունները, վեր հանել այն կնքելու, կատարելու և դադարեցնելու ընթացակար- գերի յուրահատկությունները,

✓ հետազոտել Հայաստանի Հանրապետությունում առկա կոնցեսիոն պայմա- նագրերը, ուսումնասիրել դրանցով իրականացված իրավական կարգավորման համա- պատասխանությունը կոնցեսիոն պայմանագրերի իրավական էության հետ, պարզել դրանցում տեղ գտած թերությունները և բացթողումները:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ Հայաստանի Հանրապետությու- նում քաղաքացիական իրավունքի գիտության մեջ առաջին անգամ ատենախոսության մակարդակով իրականացվել է կոնցեսիոն հարաբերությունների և կոնցեսիոն պայմա- նագրի, որպես քաղաքացիական իրավունքի կարգավորման շրջանակներում ընդգրկ- ված ինստիտուտի, իրավական էության, առանձնահատկությունների և իրավական կարգավորման հիմնախնդիրների բազմակողմանի և մանրամասն հետազոտություն, առավել վիճահարույց խնդիրների վերհանում և դրանց լուծման ուղիների մշակում: Ա- տենախոսության գիտական նորույթը որոշվում է նաև ինքնին հետազոտության նպա- տակով և այն իրականացնելու համար առաջադրված խնդիրներով, ինչպես նաև Հա- յաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք նոր դրույթների ներկայացմամբ:

Հետազոտության առարկայի համակողմանի ուսումնասիրության արդյունքում առաջադրվել են Հայաստանի Հանրապետությունում կոնցեսիայի իրավական ինստիտուտի օրենսդրական կարգավորման ու գործնական նշանակության բարձրացման որոշ ուղղություններ: Ատենախոսությամբ փորձ է կատարվել նաև տեսականորեն իմաստավորել այդ ոլորտում առկա փորձը՝ հաշվի առնելով իրականության պահանջները:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ.

1. ուսումնասիրելով կոնցեսիայի պայմանագրի իրավական էությունը, դրա ճյուղային պատկանելիության վերաբերյալ դոկտորինալ մոտեցումները և տեսությունները, դրանք վերլուծելով, առկա օրենսդրական կարգավորումների և գործնական տարածվածության հետ համադրելով՝ հանգել ենք այն եզրակացության, որ կոնցեսիայի պայմանագիրը զուտ քաղաքացիաիրավական պայմանագիր է, որը ենթակա է ամրագրման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի յոթերորդ՝ պայմանագրերից ծագող պարտավորություններ, բաժնում: Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ ու ամրագրել կոնցեսիայի պայմանագրի հասկացությունը՝ հետևյալ ձևակերպմամբ.

«Կոնցեսիայի պայմանագրով մի կողմը՝ պետություն-կոնցեդենտը, պարտավորվում է մյուս կողմին՝ առևտրային իրավաբանական անձ հանդիսացող կոնցեսիոներին տրամադրել իր բացառիկ սեփականություն հանդիսացող անշարժ գույքը կամ պատվիրակել իր մենաշնորհային գործունեության որոշակի տեսակների իրականացումը, իսկ կոնցեսիոները պարտավորվում է իր հաշվին ստեղծել և/կամ վերակառուցել տվյալ պայմանագրով սահմանված անշարժ գույքը, գործունեություն ծավալել կոնցեսիոն պայմանագրի առարկայի օգտագործմամբ կամ իրականացնել իրեն պատվիրակված գործունեությունը, ինչպես նաև վճարել պայմանագրով սահմանված կոնցեսիոն և այլ վճարները, իսկ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կոնցեդենտի սեփականությանը հանձնել նոր ստեղծված գույքը կամ վերադարձնել նրան պատկանող օբյեկտ(ներ)ը»:

2. Հաշվի առնելով կոնցեսիայի պայմանագրի կիրառման յուրահատուկ ոլորտները, դրա նպատակային ուղղվածությունը, բուն պայմանագրի առանձնահատկությունները, պայմանավորված կիրառման բնագավառներով, և կառուցակարգային նշանակությունը՝ առաջարկում ենք կոնցեսիոն հարաբերությունների լիրաժեք և համապարփակ կարգավորման նպատակով ընդունել **«Կոնցեսիոն պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը**, որով կոնցեսիոն հարաբերությունները կենթարկվեն համապարփակ իրավական կարգավորման:

3. Նկատի ունենալով այն, որ կոնցեսիոն պայմանագրերը կիրառվում են տնտեսության ամենատարբեր ոլորտներում՝ բնօգտագործումից մինչև ենթակառույցներ՝ անհրաժեշտ ենք համարում համապատասխան ճյուղային օրենքներում, մասնավորապես «Ընդերքի մասին», Հողային, Ջրային, Անտառային օրենսգրքերում, «Ավիացիայի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարել և ամրագրել նորմեր, որոնք, տեղայնացնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Կոնցեսիոն պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթները, կսահմանեն տվյալ ոլորտի այն առանձնահատկությունները, որոնք ենթակա են պարտադիր կարգավորման ծագող կոնցեսիոն հարաբերությունների շրջանակներում:

4. Քանի որ կոնցեսիայի պայմանագրերում, որպես կողմ, մշտապես մասնակցում է պետությունը, ուստի անհրաժեշտ է տնտեսական կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ընտրել հուսալի և կայուն կոնտրագենտ: Ուսումնասիրելով այդ կապակցությամբ ձևավորված միջազգային պրակտիկան, օտարերկրյա օրենսդրությունները և Եվրամիության համապատասխան դիրեկտիվներն ու դատական պրակտիկան՝ առաջարկում ենք կոնցեսիայի պայմանագրի կնքման համար սահմանել մրցութային ընթացակարգ, ընդունել մի շարք ենթաօրենսդրական ակտեր՝ համապատասխան ընթացակարգերի կազմակերպման և անցկացման, մրցութային ընթացակարգից բացառություններ կատարելու դեպքերն ու կարգը սահմանելու, մրցութային հանձնաժողովների ձևավորման և գործունեության, կայացված որոշումների բողոքարկման կարգի և ժամկետների հետ կապված հարցերի իրավական կարգավորումն իրականացնելու համար:

5. Ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ կոնցեսիայի պայմանագիրը, քաղաքացիաիրավական այնպիսի ինքնատիպ կառուցակարգ է, որը կախված պայմանագրի կարգավորման օբյեկտի առանձնահատկություններից՝ կարող է հանդես գալ քաղաքացիաիրավական պայմանագրերի երկու տարբեր խմբում: Անշարժ գույքի պարագայում դա աշխատանքների կատարման, իսկ մենաշնորհային գործունեության պատվիրակման դեպքում՝ ծառայությունների մատուցման պայմանագրերն են: Ավելին՝ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է պետական գույքի (վերա)ստեղծման և հետագա շահագործման իրավունք նախատեսող պայմանագրին, ապա այն կարող է ներառել թե՛ աշխատանքների կատարման, և թե՛ ծառայությունների մատուցման պայմանագրերի էլեմենտներ, քանի որ գործ ունենք պայմանագրի բարդ օբյեկտի հետ՝ բաղկացած երկու ինքնուրույն, առանձին կարգավորման ենթարկվող տարրերից:

6. Ելնելով կոնցեսիայի պայմանագրի կնքման յուրահատուկ ընթացակարգից՝ արձանագրում ենք այն փաստը, որ մրցութի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից համապատասխան պայմանագիր կնքելը նրա թե՛ իրավունքն է, և թե՛ պարտականությունը: Հնարավոր կոնցեսիոները չի կարող լրացուցիչ բանակցություններ անցկացնել պայմանագրի պայմանների վերաբերյալ, բացառապես այն դեպքի, երբ իր առարկությունները կապված են այն փաստի հետ, որ պայմանագրի որոշ դրույթներ չեն համապատասխանում մրցութի հրավերով կոնցեդենտի առաջարկած և իր կողմից ներկայացված ու հաղթող ճանաչված հայտում ամրագրված դրույթներին, պահանջներին ու չափանիշներին: Դրա հետ մեկտեղ նա կարող է պահանջել պետություն-կոնտրագենտից սահմանված կարգով և ժամկետներում իր հետ, որպես հաղթող ճանաչված մասնակցի, կնքել համապատասխան կոնցեսիոն պայմանագիրը կամ դիմել դատարան պայմանագրի կնքումից խուսափող կողմին պարտադրելու կնքելու համապատասխան պայմանագիրը:

7. Պոտենցիալ ներդրողների համար կոնցեսիոն գործունեությունը գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է սահմանել և սպահովել որոշակի երաշխիքների համակցություն, որը կոնցեսիոներին պաշտպանված կդարձնի ինչպես օրենսդրական միջավայրի կայունություն սպահովելով, այնպես էլ պայմանագրի վաղաժամկետ դադարման պարագայում վնասների հատուցում երաշխավորելով:

Ատենախոսության տեսական նշանակությունը կոնցեսիայի պայմանագրի, որպես քաղաքացիաիրավական ինքնուրույն պայմանագրի, բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրությունն է: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումները, եզրահանգումներն ու առաջարկությունները համալրում են քաղաքացիական իրա-

վունքի գիտության ներուժը: Ատենախոսությունը, լինելով կոնցեսիայի պայմանագրին վերաբերող առաջին համակողմանի ուսումնասիրությունը, կարող է հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար, օգտագործվել քաղաքացիական և գործարարական իրավունքի դասընթացներում, ինչպես նաև նյութ հանդիսանալ ինքնուրույն դասընթացի համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ կատարված եզրահանգումները և առաջարկությունները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության բնագավառում՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթների կատարելագործման համար, ինչպես նաև ուսումնական, մեթոդական և գիտական գրականության նախապատրաստման ժամանակ: Ատենախոսության նյութը կարող է հետաքրքրություն ներկայացնել նաև իրավագիտության և տնտեսագիտության ֆակուլտետների ասպիրանտների և ուսանողների, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների պրակտիկ աշխատողների և կոնցեսիոն պայմանագրեր կնքող գործարար շրջանառության մասնակիցների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները, հետևությունները և առաջարկություններն արտացոլված են հեղինակի կողմից 2008-2012թվականներին հրատարակված հինգ գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են ութ պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ ակտերի և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը, որոշակիացվում են հետազոտության նպատակները և խնդիրները, օբյեկտը և առարկան, մասնագիտական գրականության մեջ հիմնահարցի մշակվածության աստիճանը, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, մատնանշվում են ատենախոսական հետազոտության մեթոդական, տեսական և փորձառնական հիմքերը, նրա տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքներին փորձարկումն ու ներդրումը:

Ատենախոսության **առաջին գլխում**, «**Կոնցեսիայի և կոնցեսիոն պայմանագրի էությունն ու առանձնահատկությունները**» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել *կոնցեսիա* և *կոնցեսիոն պայմանագիր* հասկացություններին, պայմանագրի ճյուղային պատկանելիությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կոնցեսիոն հարաբերությունների իրավական կարգավորվածության աստիճանին, դրանց զարգացման հեռանկարներին և նորություններին: Քննարկվում են նաև կոնցեսիոն պայմանագիրն այլ քաղաքացիաիրավական պայմանագրերից տարանջատելու և այն որպես սինքրոնություն տեսակ դիտարկելու համար անհրաժեշտ հատկանիշների վերաբերյալ հիմնախնդիրները:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում, «**Կոնցեսիայի և կոնցեսիոն պայմանագրի հասկացությունը և իրավական բնույթը**» վերտառությամբ, ուսումնասիրության են ենթարկվել *կոնցեսիա* և *կոնցեսիոն պայմանագիր* հասկացությունները: Կոնցեսիան, որ-

պես ավելի լայն հասկացություն, իրենից ներկայացնում է հարաբերությունների համակարգ, որը բաղկացած է ինչպես վարչաիրավական, այնպես էլ քաղաքացիաիրավական բնույթի տարրերից: Ինչ վերաբերում է կոնցեսիոն պայմանագրին, ապա այն ներկայացնում է հարաբերությունների համակարգի տարրերից մեկն է և այդ հարաբերությունների ձևավորման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է հանդիսանում: Տվյալ պարագրաֆի շրջանակներում քննարկվել են նաև դոկտրինայում տեղ գտած մի շարք տեսակետներ ու հայեցակարգեր՝ կապված ինչպես *կոնցեսիոն համաձայնագիր և կոնցեսիոն պայմանագիր* հասկացություններից առավել ճշգրիտնընտրելու, այնպես էլ կոնցեսիայի պայմանագիրը՝ որպես պայմանագրի ինքնուրույն տեսակ բնութագրելու և դրա ճյուղային պատկանելությունը որոշելու հիմնախնդիրների հետ: Վերլուծության են ենթարկվել մասնագիտական գրականության մեջ տեղ գտած այն տեսությունները, ըստ որոնց կոնցեսիայի պայմանագիրը դասվել է.

- վարչական պայմանագրերի թվին՝ հաշվի առնելով հանրային սուբյեկտի մասնակցությունը տվյալ հարաբերություններին,
- քաղաքացիաիրավական պայմանագրերի թվին՝ հաշվի առնելով կողմերի իրավահավասարությունը և փոխհարաբերություններում դիսպոզիտիվ տարրի առկայությունը,
- խառը պայմանագրերի թվին՝ հաշվի առնելով հանրային և մասնավոր իրավունքի ճյուղերին բնորոշ տարրերի միաժամանակյա կիրառումը կամ քաղաքացիաիրավական տարբեր պայմանագրերին բնորոշ տարրերի առկայությունը կոնցեսիոն պայմանագրում,
- միջազգային պայմանագրերի թվին՝ հաշվի առնելով կոնցեսիոն պայմանագրերին բնորոշ կայունացնող վերապահումները, որոնք ենթադրաբար այն դուրս են բերում ազգային իրավունքի կարգավորման շրջանակներից և ներմուծում են միջազգային հանրային իրավունքին բնորոշ տարրեր:

Հեղինակը, մանրամասն ուսումնասիրելով վերոնշյալ տեսակետները, դրանց վերաբերյալ գրականության մեջ տեղ գտած կողմ և դեմ կարծիքները, հանգել է այն եզրակացության, որ կոնցեսիայի պայմանագիրը դիտարկվում է որպես բացառապես քաղաքացիաիրավական պայմանագիր: Այս դիրքորոշման օգտին մեր կողմից ներկայացվող հիմնավորումները հանգում են հետևյալին. նախ և առաջ քաղաքացիական իրավունքը, որպես իրավունքի ճյուղ, միասնության և տարբերակման սկզբունքների վրա հիմնված իրավական նորմերի համակարգ է, որոնք կարգավորում են մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև **ըշխանական և քաղաքացիական իրավունքի** վրա հիմնված հարաբերություններ, բացի այդ պետությունը, որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, կարող է ազատորեն մասնակցել քաղաքացիական շրջանառությանը (ՀՀ քաղ. օրենսգրքի հոդված 128): Մա նշանակում է, որ կոնցեսիոն պայմանագրերը քաղաքացիաիրավականի կամ վարչաիրավականի թվին դասելը, զուտ պետության մասնակցության հանգամանքից ելնելով, արդարացված չէ:

Կոնցեսիայի պայմանագրի ճյուղային պատկանելիության որոշման հարցում վճռորոշ նշանակություն ունի նաև քաղաքացիական և վարչական իրավունքի **կարգավորման մեթոդների** տարբերությունը: Կոնցեսիայի պայմանագրի համատեքստում մենք առնչվում ենք մի սուբյեկտի հետ, որը կարող է միաժամանակ լինել ինչպես քա-

ղաքացիական, այնպես էլ վարչական իրավունքի սուբյեկտ: Եթե վարչաիրավական հարաբերությունների շրջանակներում պետությունն այլ սուբյեկտների հետ իր հարաբերությունների բովանդակությունը և բնույթը որոշում է միակողմանի կամահայտնությամբ, ապա կոնցեսիայի պայմանագրի շրջանակներում կողմերն իրավահավասար են, օժտված են ինքնավար կամքով և ունեն գույքային ինքնուրույնություն:

Ակնհայտ է, որ մինչև կոնցեսիայի պայմանագրի կնքումը պետությունն իրականացնում է որոշակի գործողություններ, որոնք իրենց բնույթով բացառապես վարչաիրավական են և բխում են պետության՝ որպես սուվերեն իշխանության կրողի, իրավասություններից: Գործնականում, ցանկացած հասարակական հարաբերության, այդ թվում և կոնցեսիոն, իրավական կարգավորումն իրականացվում է պետության կողմից և այդ իմաստով, կարգավորումն ինքնին, բոլոր դեպքերում հանրային է, բացի այդ կոնցեսիոն պայմանագրի կնքմանը նախորդում են «մաքուր» վարչաիրավական բնույթի իրավաբանական փաստեր, ինչպիսիք են պետական գույքը կոնցեսիոն պայմանագրով մասնավոր կազմակերպությանը հանձնելու մասին իրավասու մարմնի որոշումը, կոնցեսիոնների ընտրության համար մրցույթի անցկացումը և այլն: Այսինքն՝ պետության վարչաիրավական բնույթի գործառույթներն իրականացվում են մինչև կոնցեսիոն պայմանագրի կնքումը և մասնավոր իրավահարաբերությունների ձևավորմանը նախորդող վարչաիրավական իրավաբանական փաստերը հանդես են գալիս այլ՝ մասնավորապես քաղաքացիաիրավական, իրավաբանական փաստերի հետ համակցության մեջ, ինչի արդյունքում ձևավորվում է **քաղղ փաստակազմ**, որից բխում են զուտ քաղաքացիաիրավական բնույթի հետևանքներ:

Ամփոփելով մերկողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները՝ առաջարկել ենք ապահովել կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորման իրականացումը թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ այն որպես պայմանագրի ինքնուրույն տեսակ ամրագրելով, թե՛ առանձին, առավել համապարփակ կարգավորում ապահովող օրենքի ընդունմամբ, ինչպես նաև ներկայացրել ենք կոնցեսիայի պայմանագրի առավել ընդհանրական սահմանում, որը կարող է ելակետային համարվել համապատասխան իրավական կարգավորումների իրականացման ընթացքում:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում, «Կոնցեսիոն հարաբերությունների օրենսդրական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում կոնցեսիոն հարաբերությունների իրավական կարգավորվածության աստիճանը, համապատասխանությունը կոնցեսիոն հարաբերությունների իրավական էությանը և միջազգային առաջադեմ երկրների փորձին: Այդ ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել այն հանգամանքը, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կոնցեսիոն իրավահարաբերությունների համապարփակ և լիարժեք իրավական կարգավորումը բացակայում է, իսկ առանձին ոլորտային կարգավորումները ճյուղային օրենքներում կրում են խիստկցկտուր և չհամակարգված բնույթ: Կոնցեսիոն պայմանագրերին վերաբերող նորմեր հանդիպում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին, ջրային, անտառային օրենսգրքերում, «Օտարերկրյա ներդրումների մասին» և «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքներում: Սակայն դրանցում առկա նորմերը միայն ներքին հակասության մեջ են գտնվում միմյանց հետ, այլև չեն արտացոլում կոնցեսիայի պայմանագրի իրավական էությունն ու տնտեսական կարևորությունը: Նման իրավիճակը, այնուամենայնիվ, չի խանգարել, որպեսզի գործնականում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքվեն և

գործառնեն կոնցեսիայի պայմանագրեր ինչպես ընդերքօգտագործման ոլորտում, այնպես էլ օդային և երկաթուղային ենթակառուցների ոլորտներում: Փաստացի իրավական կարգավորման չենթարկված կոնցեսիոն հարաբերությունների գործնականում կիրառություն գտնելու փաստը ևսմեկ անգամ կոչված է ընդգծելու համապատասխան իրավակարգավորումների ապահովման ոչ միայն անհրաժեշտությունը, այլև հրատապությունը:

Առաջինգլխիերրորդպարագարֆում, «Կոնցեսիոն պայմանագիրը՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի ինքնուրույն տեսակ» վերտառությամբ, ներկայացրել և միմյանց հետ համեմատել ենք կոնցեսիայի պայմանագրի վերաբերյալ տեսության և օրենսդրության մեջտեղ գտած տարբեր սահմանումներ, նպատակ ունենալով բացահայտել այն հիմնական գիծը, որը թե՛ տեսաբանների և թե՛ օրենսդիրների համար ընդհանուր է կոնցեսիայի պայմանագիրը ձևակերպելիս: Սակայն ուսումնասիրելով Մ.Ի.Բրազինսկու և Վ.Վ.Վիտրյանսկու, Վ.Մ. Սավիլևայի, Ժ.Վեդելի, ինչպես նաև Ռ.Գ. «Կոնցեսիոն համաձայնագրերի մասին» օրենքում տեղ գտած սահմանումները, հանգել ենք այն եզրակացության, որ տարբեր հեղինակներ ուշադրությունը սևեռում են տվյալ պայմանագրի այս կամ այն առանձնահատկության վրա, և նրանցից ոչմեկը դրանք չի դիտարկում միասնական համադրության մեջ, այնինչ այդ հատկանիշները, որքան էլ որ բնութագրական են համարվում կոնցեսիայի պայմանագրի համար, այնուամենայնիվ որպես դրա առանձնահատկություն դիտվելու համար պետք է հանդես գան միաժամանակ՝ մի շարք այլ հատկանիշների հետ համադրությամբ, որպեսզի հնարավոր լինի դրանց ամբողջական համակցությունը գնահատել որպես բացառապես կոնցեսիայի պայմանագրին բնորոշ, այն որպես պայմանագրի ինքնուրույն տեսակի դիտարկելու համար անհրաժեշտ և բավարար պայմանների խումբ: Այս իրավիճակն էլ թերևսհիմք է հանդիսանում ինչպես կոնցեսիայի պայմանագրի ճյուղային պատկանելության հարցի քննարկման, այնպես էլ այն քաղաքացիաիրավական այս կամ այն պայմանագրի տարատեսակի դիտարկելու փորձեր կատարելու համար: Սույն պարագարաֆի շրջանակներում մենք հիմնավորել ենք նաև կոնցեսիայի պայմանագրի, որպես քաղաքացիաիրավական պայմանագրի ինքնուրույն տեսակի, գոյություն ունենալու իրավունքը, այն համեմատելով մի շարք պայմանագրերի, մասնավորապես՝ վարձակալության, ֆրանչայզինգի, կապալի և հավատարմագրային կառավարման պայմանագրերի հետ: Այդ համեմատությունների ընթացքում վեր ենք հանել կոնցեսիայի և վերոնշյալ պայմանագրերի առանձնահատկությունները և տարբերությունները: Այսպես՝ վարձակալության պայմանագրի պարագայում այդ տարբերություններն առնչվում են ինչպես երկու պայմանագրերի սուբյեկտային կազմին, այնպես էլ պայմանագրի առարկային, տնտեսական նպատակներին, ծագող իրավունքների բնույթինու ծավալին, ֆրանչայզինգի պայմանագրի պարագայում այդ տարբերությունները բացի վերոնշյալ հատկանիշներից առնչվում են նաև քննարկվող պայմանագրերի նպատակաուղղվածությանը և կիրառման ասպարեզներին: Կոնցեսիայի և կապալի պայմանագրերը համեմատելիս էլ ուշադրություն ենք դարձրել այն փաստին, որ նախ ընդհանուր եզրեր կան ոչ թե պարզապես կապալի, այլ կոնցեսիայի և կապալային աշխատանքների կատարման պետական պայմանագրերի միջև, սակայն այդ պայմանագրերն էլ միմյանցից շատ տարբեր են թե՛իրենց տնտեսական նշանակությամբ, և թե՛ պետության ու հասարակության շահերի բավարարման հնարավորություններով, քանի որկապալի պայմանագրի պարագայում առաջնային է պայմանագրի առարկայի նյութական առումով բարելավումը,

իսկ կոնցեսիայի պայմանագրի դեպքում՝ գործառույթային վիճակի բարելավումը: Ինչ վերաբերում է կոնցեսիայի և հավատարմագրային կառավարման պայմանագրերի տարբերություններին, ապա կարող ենք ասել, որ վերջինս, լինելով մասնավոր սուբյեկտների փոխգործակցությունը միջնորդավորող մեխանիզմ, նպատակամղված է նրանց մասնավոր շահերի բավարարմանը, մինչդեռ կոնցեսիայի պայմանագրի դեպքում հիմնական նպատակը պետական տնտեսության բարելավումը, ենթակառույցների զարգացումը և ներդրումների ներգրավումն է: Բացի այդ, հավատարմագրային կառավարման պայմանագիրը դասվում է ֆիդուցիար պայմանագրերի թվին, իսկ կոնցեսիայի պայմանագիրը, երկրի տնտեսության համար ունեցած իր հսկայական նշանակության բերումով, այդպիսին լինել չի կարող. սրանով պայմանավորված էլ տրամազծորեն տարբեր են նաև այդ պայմանագրերի կնքման ընթացակարգերը: Վերոնշյալ բոլոր համեմատություններն ու ուսումնասիրություններն ամփոփելով էլ՝ հանգել ենք այն եզրակացության, որ կոնցեսիայի պայմանագիրը ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր է, որը կարգավորում է լիովին յուրատիպ հասարակական հարաբերությունների համակարգ, որոնք ծագում են առանձնահատուկ սուբյեկտների միջև, բացառապես որոշակի հատկանիշներով օժտված օբյեկտների կամ գործունեության ոլորտների կապակցությամբ, ունեն ընգծված նպատակային նշանակություն, սերտորեն փոխկապված են հասարակական շահերի բավարարման պետության գործառույթի իրականացման հետ, միտված են ներդրումների ներգրավմանը և ունեն կնքման որոշակի ընթացակարգ:

Ատենախոսության երկրորդ գլխում, որը կրում է «Կոնցեսիոն պայմանագրի տարրերը և դասակարգումը» անվանումը, ուսումնասիրվում են կոնցեսիայի պայմանագրի առարկայի և օբյեկտի առանձնահատկությունները և դրանք միմյանցից սահմանազատելու չափանիշները, ինչպես նաև նշված պայմանագրի դասակարգման և ենթատեսակների որոշման, պայմանագրի բովանդակության, կողմերի իրավունքների ու պարտականությունների ծավալը և յուրահատկությունները որոշելու հետ կապված հիմնախնդիրները: Վերոնշյալ հարցերի տեսական մեկնաբանությունների և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքված պայմանագրերի դրույթների ուսումնասիրության և համադրության արդյունքում դրանց վերաբերյալ մերկողմից արվում են համապատասխան եզրակացություններ և ներկայացվում առաջարկություններ:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում, «Կոնցեսիոն պայմանագրի առարկայի և օբյեկտի տարանջատման հիմնախնդիրը» վերտառությամբ, հետազոտության առարկա են հանդիսացել պայմանագրի այնպիսի բնութագրական տարրերը, ինչպիսիք են օբյեկտը և առարկան: Այս հարցը բազմակողմանիորեն դիտարկելու նպատակով ուսումնասիրության են ենթարկվել իրավաբանական գրականության մեջ տեղ գտած տարբեր տեսակետներ, որոնց կողմնակիցները մի դեպքում հանդես են գալիս վերոնշյալ տարրերի տարանջատման, այլ դեպքերում դրանք միմյանցից չառանձնացնելու և միասնական կերպով ուսումնասիրելու օգտին: Այս կապակցությամբ ներկայացվել են Օ.Ս.Իոֆֆեյի, Մ.Ի.Բրազինսկու և Վ.Վ.Վիտրյանսկու տեսակետները, ինչպես նաև հիմնախնդիրը մասնավորեցվել և առանձին ուսումնասիրության է ենթարկվել կոնցեսիայի պայմանագրի համատեքստում: Այս հարցի համակողմանի հետազոտման նպատակով ուշադրության առարկան դարձվել ինչպես ժամանակակից հեղինակներ Ս.Ա.Սոսնայի, Ռ.Մ.Ժենալետոյի, Օ.Ն. Սավինովայի, Վ.Ն.Լիսիցայի դոկտրինալ մեկնաբանությունները, այնպես էլ կոնցեսիայի պայմանագրի օրենսդրական ձևակերպումները, ո-

րոնք հնարավորություն են տալիս բացահայտելու պայմանագրի օբյեկտի և առարկայի տարանջատման հարցի վերաբերյալ օրենսդրի կողմից անուղղակի կերպով ցուցաբերված դիրքորոշումը: Այս հիմնահարցի առավել խորքային վերլուծություն ապահովելու նպատակով՝ կոնցեսիայի պայմանագրի տարրերը համեմատվել են կոնցեսիոն իրավահարաբերության տարրերի հետ և վերլուծության ենթարկվել այդ համատեքստում: Այսպես՝ պայմանագիրն այն վերջնական իրավաբանական փաստն է, որը մի շարք իրավաբանական փաստերի համակցությամբ ավարտին է հասցնում քաղաքացիական իրավունքի սուբյեկտներիմիջև կոնցեսիոնպայմանագրային հարաբերությունների ձևավորումը, մինչդեռ կոնցեսիոն իրավահարաբերություններնինքնին, գոյությունունեն անկախ կոնցեսիոն պայմանագրի կնքման փաստից, որպեսինքնուրույն հասարակական հարաբերություն, որը ենթարկված է համապատասխան իրավական կարգավորման: Այսինքն՝ կոնցեսիոն իրավահարաբերությունները վերացական առումով առկա են այն պահից, երբ ստանում են օրենսդրական կարգավորում, և դրանց ուսումնասիրությունը որևէ կերպ պայմանավորված չէ որոշակի սուբյեկտներիմիջև ձևավորվող պայմանագրային կոնցեսիոն հարաբերությունների առկայության կամ բացակայության փաստով: Ուստի անհրաժեշտ ենք համարել վեր հանելու նաև կոնցեսիոն իրավահարաբերությունների օբյեկտի առանձնահատկությունները և պարզելու, թե ի՞նչառնչություն ունի այն կոնցեսիոն պայմանագրի առարկայի և օբյեկտիհետ: Ի տարբերություն քաղաքացիական իրավահարաբերությունների, որոնքունեն երեք տարր, քաղաքացիական պայմանագրերն, ի թիվս այդ երեքի, ունեն մեկ տարր ևս՝ պայմանագրի առարկան: Այս հարցը կոնցեսիոն պայմանագրի համատեքստում ուսումնասիրելու արդյունքում, հանգել ենք այն եզրակացության, որկոնցեսիոն իրավահարաբերությունների օբյեկտը՝ պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը կամ բացառիկ իրավասությանը վերապահված որոշակի իրավասությունների ոլորտում ծավալվող գործունեությունը՝ կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների տեսքով, լիովին կարող ենք դիտարկել որպես կոնցեսիայի պայմանագրի առարկա: Իսկ պայմանագրի օբյեկտըբոլորովինինքնուրույն տարր է և որևէ առնչություն չունի իրավահարաբերությունների օբյեկտիհետ: Ամփոփելով՝ ընդգծել ենք, որմենք կողմնակից ենք այն գիտական մոտեցմանը, համաձայն որի՝ անհրաժեշտ է տարանջատել պայմանագրի օբյեկտ և առարկա հասկացությունները և եկել այն եզրակացության, որ կոնցեսիայի պայմանագրի օբյեկտն այն գործողությունների ամբողջությունն է, որն իրականացնում են կողմերը պայմանագրի առարկայի վրա ներագդելու նպատակով, իսկ առարկան այն նյութական կոնկրետ արժեքներն են կամ ծառայությունները, որոնց կապակցությամբ կողմերըմտնում են պայմանագրային հարաբերությունների մեջ:Մերկողմից կատարված հաջորդ եզրակացությունը, որը բխում է պայմանագրի օբյեկտի և առարկայի տարանջատման գաղափարից, առնչվում է դրա կիրառական նշանակությանը և հանգում է հետևյալին, որհիմք ընդունելով պայմանագրի օբյեկտը, կարելի է որոշել տվյալ պայմանագրի խմբային պատկանելությունը, այսինքն՝ որոշել պայմանագրի տեսակը, իսկ պայմանագրի առարկայի միջոցով հնարավոր է լինումորոշել դրա ենթատեսակները:

Երկրորդգլխիերկրորդ պարագրաֆում, «Կոնցեսիոն պայմանագրի տեղը քաղաքացիական իրավունքում և դասակարգումը» վերտառությամբ, ներկայացվում և մանրամասն վերլուծության են ենթարկվում կոնցեսիայի պայմանագրի դասակարգման հիմքում դրվող չափանիշները, քննարկվում է տվյալ պայմանագրի դերը քաղաքա-

ցիաիրավական պայմանագրերի համակարգում ընդհանրապես, և դրա խմբային պատկանելիության հարցը՝ մասնավորապես: Ընդ որում՝ այդ հարցի պարզաբանման համար ուսումնասիրության են ենթարկվում քաղաքացիական իրավունքի գիտության մեջ քաղաքացիական պայմանագրերն առանձին խմբերում համակարգելու համար ընդունված չափանիշները, մասնավորապես ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման պայմանագրերը միմյանցից տարանջատելու և ինքնուրույն խմբերում միավորելու նախապայման հանդիսացող հատկանիշները: Հաշվի առնելով կատարված վերլուծությունները, ինչպես նաև կոնցեսիայի պայմանագրի օբյեկտի առանձնահատկությունները՝ մենք հանգել ենք այն եզրակացության, որ կոնցեսիայի պայմանագրի խմբային պատկանելիության որոշումը պայմանավորված է պայմանագրի օբյեկտով, ըստ այդմ էլ այն կարող է ընդգրկվել թե՛ ծառայությունների մատուցման և թե՛ աշխատանքների կատարման պայմանագրերի խմբում: Ավելին՝ այն դեպքերում, երբ պայմանագրում նախատեսվում է գույքի (վերա)ստեղծում՝ այն հետագայում շահագործելու նպատակով, ապա այն կարող է միաժամանակ պարունակել երկու խումբ պայմանագրերի տարրեր: Ինչ վերաբերում է կոնցեսիայի պայմանագիրը ենթատեսակների դասակարգելուն, ապա թե՛ տնտեսագիտական, և թե՛ իրավաբանական դոկտրինալ աղբյուրներում հանդիպում են ամենատարբեր չափանիշներ, որոնց հիման վրա այդ դասակարգումն իրականացվում է բավականին ընդարձակ կերպով՝ հիմք ընդունելով կոնցեսիայի պայմանագրի առարկայի այս կամ այն առանձնահատկությունը: Մակայն ուշագրավ ենք համարում այն փաստը, որ այդ դասակարգումների բազմազանության մեջ կոնցեսիայի պայմանագրի ենթատեսակներ, ըստ պայմանագրի այլ յուրահատկությունների, չեն առանձնացվում:

Ամփոփելով այդ տեսակետները՝ առաջարկում ենք կոնցեսիայի պայմանագրերի դասակարգումը իրականացնել ըստ հետևյալ չորս չափանիշների.

1. ըստ պայմանագրի սուբյեկտների առանձնահատկությունների,
2. ըստ պայմանագրի օբյեկտի առանձնահատկությունների,
3. ըստ պայմանագրի առարկայի,
4. ըստ պայմանագրի առարկայի շահագործման կարգի կամ կոնցեսիոների իրավասությունների առանձնահատկությունների:

Այդ դասակարգումների հիման վրա նաև վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքված կոնցեսիոն պայմանագրերը՝ դրանց խմբային պատկանելիությունը և ենթատեսակի առանձնահատկությունները որոշելու համար:

Երկրորդ գլխի երրորդ պարագաֆում, «Կոնցեսիոն պայմանագրի բովանդակությունը» խորագրով, քննարկվել են կոնցեսիայի պայմանագրի բովանդակությունը կազմող տարրերի՝ էական, սովորական և պատահական պայմանների վերաբերյալ գիտական մոտեցումները, ինչպես նաև եռաշերտ բաժանման նպատակահարմարության տեսանկյունից, այնպես էլ կոնցեսիայի պայմանագրի համար էական համարվող պայմանների ամբողջությունը որոշելու կապակցությամբ:

Առկա օրենսդրական և տեսական մոտեցումների հիման վրա, մենք առաջարկել ենք կոնցեսիայի պայմանագրի էական պայմաններ համարել պայմանագրի առարկան, գինը, ժամկետը, կոնցեսիոների կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց վճարը կամ այն հաշվարկելու կարգը, այն սխեման, որով պետական ձեռնարկությունը տրվում է կոնցեսիոներին, վերջինիս կողմից հաշվետվություններ կազմելու և ներկա-

յացնելու պարբերականությունը, այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է գնահատվի կոնցեսիոների գործունեությունը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները պայմանագրի ժամկետի ավարտից հետո: Առաջարկվել է նաև էական պայմանների ամրագրումն իրականացնել օրենսդրական, այսպես կոչված, երկու մակարդակներում. առավել ընդհանուր պայմաններն ամրագրել կոնցեսիոն հարաբերությունները կարգավորող բազային օրենքում, իսկ կոնցեսիոն պայմանագրի առանձին ենթատեսակների համար էական պայմաններ սահմանել համապատասխան ճյուղային օրենսդրական ակտերում:

Ատենախոսության **երրորդ գլխում**, «**Կոնցեսիոն պայմանագրի կնքման, կատարման և դադարման առանձնահատկությունները**» վերտառությամբ, քննարկվել են կոնցեսիայի պայմանագրի կնքման առանձնահատկությունները, ուսումնասիրվել են օտարերկրյա և Եվրամիության օրենսդրությամբ ընդունված կառուցակարգերը, դրանցից հնարավոր բացառությունները, ինչպես նաև հետազոտվել են կոնցեսիայի պայմանագրի փոփոխման հնարավորություններն ու առանձնահատկությունները, պայմանագրի դադարման և լուծման հիմքերը, այդ գործընթացների ժամանակ ինչպես կողմերի, այնպես էլ հասարակության շահերի պաշտպանության երաշխիքները:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում, «**Գույքը կոնցեսիոն հիմունքներով տրամադրելու առանձնահատկությունները**» վերտառությամբ, ներկայացվել են պետության հետ կոնցեսիոն պայմանագրային հարաբերություններ ձևավորելու համար անհրաժեշտ նախապայմանները, քննարկվել են կոնկրետ գույքի ընտրության *տնտեսական և սոցիալական հիմնավորում* հասկացության էությունը, անդրադարձ է կատարվել այդ հարաբերությունների պոտենցիալ մասնակիցների ընտրության համաշխարհային պրակտիկային հայտնի ընթացաբեղին, ՌԴ-օրենսդրությամբ, ինչպես նաև Եվրամիության դիրեկտիվներով և դատական պրակտիկայի կողմից ընդունված ու կիրառելի համարվող եղանակներին, որոնք են փակ և բաց մրցույթը և անմիջական բանակցությունները, դրանց կիրառման համար անհրաժեշտ նախապայմաններին: Այդ համատեքստում ուսումնասիրվել են նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քննարկվող հարցերի վերաբերյալ ցուցաբերված մոտեցումները և դրանց կատարելագործման ուղիները: Ընդհանուր առմամբ՝ կոնցեսիայի պայմանագրի կնքումն ու կատարումը պետք է դիտարկել որպես կազմակերպական բնույթի հարաբերությունների համակարգ, որնիր արտացոլումն է գտնում համապատասխան իրավաբանական ընթացակարգերի միջոցով:

Կոնցեսիայի պայմանագրի կնքման իրավաբանական ընթացակարգի բաղադրիչներ է ընդունված համարել.

1. կոնցեսիոն համաձայնագրի կնքման մասին որոշման ընդունման և այդ մասին պոտենցիալ կոնցեսիոներներին իրազեկելու գործընթացը,
2. կոնցեսիայի պայմանագրի կնքման համար մրցույթի անցկացման գործընթացը,
3. մրցույթի արդյունքների հիման վրա կոնցեսիոն պայմանագրի կնքման գործընթացը,
4. պայմանագիրը կնքված ճանաչելու գործընթացը:

Հատուկ ուշադրության ենք արժանացրել այն փաստը, որ կոնցեսիայի պայմանագրի դրույթները պետք է համապատասխանեն թե՛ կոնցեդենտի որոշման, և թե՛ կոնցեսիոների կողմից ներկայացված հայտ-առաջարկի դրույթներին: Ուշագրավ է հա-

մարվել նաև այն, որ կոնցեսիայի պայմանագրի նախագիծը ստորագրելը հաղթող ճանաչված մասնակցի թե՛ իրավունքն է, և թե՛ պարտականությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված մասնակիցը չի կարող անհիմն կերպով և առանց բասական հետևանքներ կրելու հրաժարվել պայմանագրի կնքումից: Միաժամանակ նա իրավունք ունի պահանջելու պետություն-կոնտրագենտից սահմանված կարգով և ժամկետներում իր, որպես մրցույթի հաղթող մասնակցի, հետ կնքել համապատասխան կոնցեսիոն պայմանագիրը կամ դիմել դատարան պայմանագրի կնքումից խուսափող կողմին այն կնքելուն պարտավորեցնելու համար:

Հաղթող ճանաչված մասնակիցը գործնականում իրավունք չունի բանակցել պայմանագրի նախագծի կետերի փոփոխման շուրջ, բացառությամբ այն դեպքի, երբ իր առարկությունները կապված են այն փաստի հետ, որ պայմանագրի որոշ դրույթներ չեն համապատասխանում մրցույթի հրավերով կոնցեդենտի առաջարկած և իր կողմից ներկայացված ու հաղթող ճանաչված հայտում ամրագրված դրույթներին, պահանջներին ու չափանիշներին: Այդ պարագայում նա պետք է ունենա պայմանագրի պայմանների ճշգրտման հնարավորություն:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում, «Կոնցեսիոն պայմանագրի դադարումը. կողմերի իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ, քննարկվել են կոնցեսիայի պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու գործընթացի յուրահատկությունները, որոնք պայմանավորված են կոնցեսիայի պայմանագրի կնքման մրցութային կարգով: Առավել հատկանշական է համարվել այն փաստը, որ պայմանագրի գործողության ընթացքում, անգամ կողմերի համաձայնությամբ, չեն կարող փոփոխվել պայմանագրի այն կետերը, որոնք բխում են մրցույթի պահանջներից և ենթակա են պարտադիր ամրագրման կնքվող պայմանագրերում: Մեր համոզմամբ այս նորմը պետք է իր արտացոլումը գտնի համապատասխան հարաբերությունները կարգավորող օրենքում: Տվյալ պարագրաֆում ներկայացվել են նաև կողմերից յուրաքանչյուրի համար պայմանագրի փոփոխություն կամ լուծում նախաձեռնելու հնարավոր հիմքերն ու տվյալ իրավիճակների հավանական լուծումները: Առանձնահատուկ կերպով ուշադրություն ենք արժանացրել կոնցեսիայի պայմանագրի լուծման այնպիսի ինքնատիպ հիմքի վրա, ինչպիսին է պայմանագրի դադարումը այն դեպքում, երբ պարզվում է, որ առկա են գործող կոնցեսիոն պայմանագրի կնքման մրցութում հաղթող ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու հիմքեր՝ հաղթող մասնակցի կողմից ոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնելու կամ համանման որևէ այլ պատճառով: Այդ պարագայում կոնցեսիոն պայմանագրի լուծման հիմք կարող է հանդիսանալ, մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող ճանաչված սուբյեկտի հետ կոնցեսիոն պայմանագրի կնքելու մասին կառավարության որոշումն ուժը կորցրած ճանաչելը: Այսինքն՝ կոնցեսիայի պայմանագրի լուծման հիմքում դրվում է վարչական ակտը, որն այլ, հիմնականում քաղաքացիաիրավական, իրավաբանական փաստերի համակցությամբ հանգեցնում է կոնցեսիայի պայմանագրի դադարեցմանը: Այս պարագայում, արդեն, կարող ենք խոսել կոնցեսիոնների կողմից կոնցեդենտին պատճառած վնասների հատուցման մասին: Այս իրավիճակում առաջարկել ենք հետևյալ մոտեցումը. եթե պայմանագրի լուծման համար հիմքերը հայտնաբերվում են պայմանագրի կնքումից հետո այնքան կարճ ժամանակահատվածում, որ կոնցեսիոնները դեռևս ներդրումներ չի կատարել և չի սկսել գույքի ստեղծման/վերակառուցման աշխատանքները, ապա նա պարտավոր է հատուցել մրցույթի կազմակերպման և անցկացման համար կոնցեդենտի կատարած ծախսերը:

Իսկ եթե վերոնշյալ հիմքերն ի հայտ են գալիս ավելի ուշ, երբ կոնցեսիոները արդեն իսկ կատարել է որոշակի ծավալի ներդրումներ և համապատասխան աշխատանքներ, ապա պայմանագրի լուծումից հետո կոնցեսիոներին իր իսկ կողմից փաստացի կատարված ներդրումների վերադարձ տեղի չի ունենում, ինչը հանդիսանում է այն տուժանքը, որը վճարում է պետությանը մոլորության մեջ գցած և կեղծ տեղեկություններ ներկայացրած կոնտրագենտը:

Անդրադարձ է կատարվել նաև այն երաշխիքներին, որոնց ուժով հնարավոր է ապահովել կողմերի՝ կոնցեսիոների և կոնցեդենտի, շահերի և իրավունքների պաշտպանությունը պայմանագրի փոփոխման և հատկապես լուծման դեպքերում: Այդպիսի երաշխիքներ են համարվել ինչպես պայմանագրի գործողության ընթացքում հարկային և ընդհանրապես օրենսդրական միջավայրի կայության ապահովումը, այնպես էլ պայմանագրի դադարման պարագայում կողմերի վրա համապատասխան վնասների փոխհատուցման պարտավորություն դնելը՝ պայմանով, որ յուրաքանչյուր դեպքում պետք է նախ և առաջ ապահովել շահագրգիռ հասարակության, կոնցեսիոն գործունեության թիրախ հանդիսացող ոլորտների և դրանց սպառողների շահերի պաշտպանությունը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոնցեսիայի՝ որպես հարաբերությունների համակարգի և կոնցեսիայի պայմանագրի՝ որպես ինքնուրույն իրավական ինստիտուտի, վերաբերյալ միջազգային փորձի, օտարերկրյա օրենսդրության և տեսական ամենատարբեր դոկտրինաների հիման վրա կատարված ուսումնասիրությունները հանգեցնում են որոշակի եզրակացությունների: Նախ և առաջ պետք է ընդգծել, որ կոնցեսիայի ինստիտուտը, հանդիսանալով պետություն-մասնավոր համագործակցությունը միջնորդավորող ժամանակակից ամենակիրառելի կառուցակարգերից մեկը, կոչված է ապահովելու ներդրումների հոսք տնտեսության առավել խոցելի և/կամ ռազմավարական նշանակություն ունեցող հատվածներ, խթանելու համապատասխան ենթակառույցների զարգացումը՝ դրանով իսկ նպաստելով պետական կամ հասարակական առավել առանցքային և կարևոր շահերի բավարարմանը: **Այն ներկայումս համարվում է բավականին արդյունավետ միջոց, որի շնորհիվ ապահովվում է պետական բացառիկ սեփականության կառավարման կամ մենաշնորհային բնույթի գործունեության ոլորտներում մասնավոր հատվածի ոչ միայն ֆինանսական, այլև գործարարական ներուժի ներգրավումը:** Այդ է պատճառը, որ կոնցեսիայի պայմանագրի, որպես իրավական ժամանակակից կառուցակարգի, աճող գործնական նշանակությանը համահունչ **անհրաժեշտ է ավելացնել սույն հիմնահարցի տեսական ուսումնասիրությունների ծավալը:** Ներկայումս հայրենական իրավաբանական դոկտրինայում այս հիմնախնդիրն ընդհանրապես գիտական հետազոտության ենթարկված չէ, ինչը լուրջ դժվարությունների պատճառ կարող է հանդիսանալ կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորման գործում, ինչպես նաև անհատությունների առիթ լինել տվյալ կառուցակարգի պրակտիկ կիրառության ընթացքում: **Ինչպես ցույց տվեցին սույն ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները հայրենական օրենսդրությունը կոնցեսիոն հարաբերությունների կարգավորման հարցում ունի լուրջ կատարելագործման խնդիր,** քանի որ դրանց իրավական կարգավորումը միասնական հիմնարար ակտով ներկայումս բացակայում է, իսկ որոշ ճյուղային օրենքներում կամ ենթաօրենսդրական ակտերում տեղ գտած դրույթները,

բացի այն, որ շատ ժլատ են համապատասխան իրավակարգավորում իրականացնելու հարցում, նաև լիովին չեն արտացոլում այդ հարաբերությունների էությունը: Դրանք հաճախ օգտագործելով «կոնցեսիոն պայմանագիր» հասկացությունը, իրականում ամրագրում են այնպիսի դրույթներ, որոնք հեռու են կոնցեսիոն հարաբերություններից, կամ անհետևողական են կիրառվող եզրույթների նկատմամբ: Նշված հարաբերություններին վերաբերող նորմերում կարող ենք հանդիպել թե՛ բուն կոնցեսիային, թե՛ թույլտվության, թե՛ լիցենզավորման ինստիտուտներին բնորոշ ձևակերպումներ: Բացի այդ, քննարկվող իրավական ակտերը զուրկ են ինչպես ներքին, այնպես էլ միմյանց միջև ենթադրվող տրամաբանական կապից: ***Եվ չնայած օրենսդրական անբարենպաստ միջավայրին, Հայաստանի Հանրապետությունում ներկայումս կնքվել և գործառնում են մի շարք կոնցեսիոն պայմանագրեր թե՛ ընդերքօգտագործման և թե՛ ենթակառույցների (մասնավորապես երկաթուղու համակարգի և օդանավակայանի) վերաբերյալ:*** Ընդ որում՝ այդ պայմանագրերը թեև իրենց իրավական էությամբ և առանձնահատկություններով ունեն կոնցեսիոն բնույթ, սակայն եզակի դեպքերում են համապատասխան կերպով անվանվում: Առավել հաճախ դրանք կոչվում են լիցենզային կամ թույլտվության պայմանագրեր (ընդերքօգտագործման բնագավառում) կամ հավատարմագրային կառավարման պայմանագրեր (ենթակառուցվածքների բնագավառում): Այս իրավիճակը, փաստորեն, արտացոլում է օրենսդրական անկատարության ազդեցությունը պրակտիկայի վրա: ***Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործնականում ձևավորված իրավիճակը նպաստավոր պայման է հանդիսանում կոնցեսիոն հարաբերությունների կարգավորման համար:*** Բնականաբար, իրավաստեղծման համար պետք է բազմակողմանիորեն և խորությամբ ուսումնասիրել կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները՝ հնարավորինս լիարժեք դրանք կարգավորելու և օրենսդրական բացերն ու կոլիզիաները բացառելու նպատակով: Կոնցեսիոն պայմանագրի պարագայում գործ ունենք այնպիսի մի իրավիճակի հետ, երբ տվյալ հասարակական հարաբերությունների զարգացման մակարդակը և տարածվածության աստիճանն իրենք են պարտադրում համապատասխան իրավակարգավորումների անհրաժեշտությունը, և օրենսդիրը հնարավորություն ունի առավելագույն արդյունավետ կերպով իրականացնելու իր առջև դրված խնդիրը: Այս կառուցակարգի իրավական բնույթը, առանձնահատկությունները, ծագող հիմնախնդիրները, օրենսդրական կարգավորման առավել առանցքային ուղղությունները բխում են այդ հարաբերությունների գործնական կիրառում ունենալու հանգամանքից, և ***համապատասխան իրավական կարգավորումը տեղի է ունենում, ըստ էության, էմպիրիկ փորձի հիման վրա:***

Սույն ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում հանգել ենք նաև այն եզրակացության, որ ***կոնցեսիայի պայմանագրի օրենսդրական կարգավորման ընթացքում պետք է հիմք ընդունել այն, որ կոնցեսիայի պայմանագիրը, իր իրավական բնույթով, զուտ քաղաքացիաիրավական պայմանագիր է***, որի ձևավորման հիմքում ընկած է բարդ փաստակազմ, ունի կարգավորման յուրահատուկ առարկա և օբյեկտ, ինչպես նաև տնտեսական առանձնահատուկ նպատակներ և կոչված է երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը: Պետք է հիմք ընդունել նաև կոնցեսիայի պայմանագրի այն առանձնահատկությունը, ***որ որպես պայմանագրի առարկա հանդես է գալիս քաղաքացիական շրջանառությունից հանված գույքը (ինչպես նաև պետական մենաշնորհային բնույթի գործունեությունը):*** Այս յուրահատկությունն ինք-

նին հերքում է այն բոլոր տեսակետները, որոնցով փորձ է արվում կոնցեսիայի պայմանագիրը դիտարկել գույքի կամ գույքային իրավունքների փոխանցումը միջնորդավորող պայմանագրերի թվում: Ակնհայտ է, որ այդպիսով տեղի է ունենում պայմանագրի առարկայի կամ դրա նկատմամբ իրավունքների փոխանցում մի սուբյեկտից մյուսին, այսինքն շրջանառություն, ինչը պետության բացառիկ սեփականություն հանդիսացող գույքի պարագայում բացառվում է:

Ինչ վերաբերում է կոնցեսիայի պայմանագրի քաղաքացիաիրավական պայմանագրերի հայտնի չորս խմբերից որևէ մեկին պատկանելու հարցին, ապա այս կապակցությամբ հանգել ենք հետևյալ եզրակացությանը. այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է կոնցեսիայի պայմանագրի հիման վրա ենթակառույցների զարգացման նպատակով պետության բացառիկ սեփականություն հանդիսացող գույքը մասնավոր սուբյեկտին տրամադրելուն՝ այն վերակառուցելու կամ նույն նպատակով նոր գույք ստեղծելուն, որը ևս սեփականության իրավունքով պատկանելու է պետությանը, ապա այս դեպքում առնչվում ենք աշխատանքների կատարման պայմանագրի հետ, իսկ երբ խոսքը վերաբերում է կոնցեսիայի պայմանագրի հիման վրա մասնավոր սուբյեկտի կողմից բնօգտագործման ոլորտում գործունեություն ծավալելու կամ պետական մենաշնորհային գործունեությունը նրան պատվիրակելու դեպքերին, ապա կոնցեսիայի պայմանագիրը հանդես է գալիս ծառայությունների մատուցման պայմանագրերի խմբում: *Այսինքն՝ կոնցեսիայի պայմանագիրը, քաղաքացիաիրավական այնպիսի ինքնատիպ կառուցակարգ է, որը կախված պայմանագրի կարգավորման օբյեկտի առանձնահատկություններից՝ կարող է հանդես գալ քաղաքացիաիրավական պայմանագրերի երկու տարբեր խմբում, ավելին՝ եթե խոսքը վերաբերում է պետական գույքի (վերա)ստեղծման և հետագա շահագործման իրավունք նախատեսող պայմանագրին, ապա այն կարող է ներառել թե՛ աշխատանքի կատարման, և թե՛ ծառայությունների մատուցման պայմանագրերի էլեմենտներ*, քանի որ գործ ունենք պայմանագրի բարդ օբյեկտի հետ՝ բաղկացած երկու ինքնուրույն, առանձին կարգավորման ենթարկվող տարրերից:

Կոնցեսիայի պայմանագրով առաջադրված նպատակների իրականացման հարցում առանցքային նշանակություն ունի այն, թե որպես կոնցեսիոներ ի՞նչ կազմակերպություն կհանդիսանա պայմանագրի կողմ: Ձևավորված միջազգային պրակտիկան, օտարերկրյա օրենսդրությունները և Եվրամիության համապատասխան դիրեկտիվներն ու դատական պրակտիկան հիմք ընդունելով՝ *եկել ենք այն եզրակացության, որ կոնցեսիոների ընտրության լավագույն եղանակ կարող է համարվել մրցույթի անցկացումը*, որը հնարավորություն է տալիս կոնցեսիոն հարաբերություններ ձևավորել ոչ թե պարզապես առավելագույն ներդրումներ առաջարկող կազմակերպության հետ, այլ այն կոնտրազենտի հետ, որը դրանից բացի ներկայացնում է համագործակցության առանցքում գտնվող ենթակառույցների զարգացման և հետագա շահագործման լավագույն առաջարկը: Բնականաբար նման ընթացակարգից կարող են կատարվել որոշ բացառություններ, որոնք կբխեն ոլորտի առանձնահատկություններից, կոնցեսիայի կիրառման հրատապությունից կամ այլ օբյեկտիվ ու հիմնավորված փաստերից, սակայն այդ դեպքերը պետք է հստակ ու սպառիչ կերպով ամրագրված լինեն համապատասխան իրավական ակտերում՝ կամայականությունները բացառելու և կոնցեսիոների հիմնավորված ընտրությունն ապահովելու նպատակով:

Կոնցեսիայի պայմանագիրը, իր կարգավորման բարդ առարկայի փաստով պայմանավորված հանդիսանում է այն եզակի քաղաքացիաիրավական պայմանագրերից, որ ունի բազում տարատեսակներ թե՛ ընդերքօգտագործման և թե՛ ենթակառույցների ոլորտներում: Միաժամանակ այն տարբերվում է այլ քաղաքացիաիրավական պայմանագրերից նրանով, որ *տարատեսակների է դասակարգվում ոչ միայն առարկայի հիման վրա, այլև ևսերեք չափանիշների շնորհիվ, որոնք են՝ պայմանագրի սուբյեկտային կազմը, օբյեկտի առանձնահատկությունները և պայմանագրի առարկայի շահագործման կարգի և կոնցեսիոների իրավասությունների առանձնահատկությունները*: Տարբերակիչ ևս մեկ առանձնահատկություն է այն, որ կոնցեսիայի պայմանագրի կարգավորման շրջանակում ընդգրկված հասարակական հարաբերությունների համալիր բնույթով պայմանավորված նրանում *պարտադիր անբազմաձև ենթակա կետերը՝ էական պայմանները, բազմաթիվ են* և վերաբերում են պայմանագրի առարկային, գնին, գործողության ժամկետին, կոնցեսիոների կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց վճարի չափին, պետական ձեռնարկությունը կոնցեսիոն հիմունքներով տրամադրելու սխեմային, կոնցեսիոների հաշվետվությունների կազմին և պարբերականությանը, կոնցեսիոն գործունեությունը գնահատելու չափանիշներին, ինչպես նաև կողմերի իրավունքներին և պարտականություններին պայմանագրի ժամկետի ավարտից հետո: Այսպիսով՝ կարևորելով կոնցեսիայի պայմանագրի դերն ու նշանակությունը ժամանակակից տնտեսությունների զարգացման գործում, երկրում ներդրումային նպաստավոր մթնոլորտ ապահովելու և պոտենցիալ ներդրողների համար կոնցեսիոն գործունեություն ծավալելը գրավիչ դարձնելու նպատակով *անհրաժեշտ է ապահովել այնպիսի երաշխիքների համակցություն, որը կոնցեսիոներին պաշտպանված կդարձնի՝ ինչպես օրենսդրական միջավայրի կայունություն ապահովելով, այնպես էլ պայմանագրի վաղաժամկետ դադարման պարագայում վնասների հատուցում երաշխավորելով*:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Կոնցեսիայի պայմանագրի իրավական բնույթը» // Պետություն և իրավունք, Երևան, 2009, № 3(45), էջ 82-92:
2. «Կոնցեսիայի պայմանագիրը՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի ինքնուրույն տեսակ» // Բանբեր ՀՊՏՀ, Երևան, 2010, № 2(20), էջ 132-148:
3. «Կոնցեսիայի պայմանագրի առարկայի և օբյեկտի տարանջատման հիմնախնդիրը»// Պետություն և իրավունք, Երևան, 2011, № 3 (53), էջ 16-29:
4. «Կոնցեսիոն պայմանագրի դադարումը. կողմերի իրավունքների պաշտպանությունը» //Բանբեր ՀՊՏՀ 2011, Երևան , № 3(24), էջ 133-145:
5. «Գույքը կոնցեսիոն հիմունքներով տրամադրելու առանձնահատկությունները» //ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՀՀ անկախության հռչակման 20-ամյակին., Երևան, 2012, էջ 518-537:

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ КОНЦЕССИОННОГО ДОГОВОРА

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблемам правового регулирования концессионного договора. Объектом научного исследования является концессионный договор как особый вид гражданско-правового договора. Предметом исследования является государственно-частное партнерство, возникающее на основе концессионного договора. Предметом диссертационного исследования являются также особенности правовых норм, регулирующих отношения между сторонами договора и механизмы их применения, а также недостатки и коллизии в процессах выбора концессионера, заключения, исполнения и прекращения концессионного договора.

Выводы автора, сделанные на основе еմբնեայի աւելյ էիօանքէ եւ քննարկ ունի՝ յայտնի է, որ կոնցեսիոնային պայմանագրերը, որոնք կազմում են հատուկ կատեգորիա քաղաքացիական պայմանագրերի մեջ, արտադրվում են միայն հաստատվելով պետության կողմից և հաստատվելով որպես պետության և անհատների միջև կապվող կոնցեսիոնային պայմանագրերի ենթատեսիլ:

- ✓ էիօնեթօն էիօանքէ, յաբոյն ունի այնպիսի փոփոխություններ, որոնք առկա են այնպիսի պայմանագրերում, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ՝ ինչպես նաև այնպիսի պայմանագրերում, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ՝ ինչպես նաև այնպիսի պայմանագրերում, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ:
- ✓ այնպիսի պայմանագրերում, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ:
- ✓ ի՞նչ պայմանագրերում կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ, որոնք կապված են կոնցեսիոնային պայմանագրերի հետ:

рассмотреть концессионный договор в числе тех гражданско-правовых договоров, которые опостердуют передачу имущества или имущественных прав;

- ✓ разновидности концессионного договора классифицируются не только по спецификам предмета договора, но и на основе особенностей субъектного состава, объекта и порядка эксплуатации предмета концессионного договора.
- ✓ $\hat{i}\hat{n}\hat{i}\hat{a}\hat{u}\hat{a}\hat{y}\hat{n}\hat{u}$ $\hat{i}\hat{a}$ $\hat{i}\hat{a}\hat{x}\hat{a}\hat{o}\hat{i}\hat{a}\hat{d}\hat{i}\hat{a}\hat{i}\hat{e}$ $\hat{i}\hat{d}\hat{a}\hat{e}\hat{o}\hat{e}\hat{e}\hat{a}$, \hat{a} $\hat{o}\hat{a}\hat{e}\hat{x}\hat{a}$ $\hat{i}\hat{a}$ $\hat{n}\hat{i}\hat{i}\hat{o}\hat{a}\hat{o}\hat{n}\hat{o}\hat{a}\hat{o}\hat{r}\hat{u}\hat{e}\hat{a}$
 $\hat{A}\hat{e}\hat{d}\hat{a}\hat{e}\hat{o}\hat{e}\hat{a}\hat{u}$ $\hat{A}\hat{a}\hat{d}\hat{i}\hat{n}\hat{i}\hat{r}\hat{c}\hat{a}$ \hat{e} $\hat{n}\hat{o}\hat{a}\hat{a}\hat{i}\hat{o}\hat{r}$ $\hat{i}\hat{d}\hat{a}\hat{e}\hat{o}\hat{e}\hat{e}\hat{o}$, $\hat{e}\hat{n}\hat{o}\hat{i}\hat{a}\hat{y}$ $\hat{e}\hat{c}$ $\hat{n}\hat{i}$ $\hat{u}\hat{n}\hat{e}\hat{a}$ $\hat{c}\hat{a}\hat{d}\hat{o}\hat{a}\hat{a}\hat{x}\hat{i}\hat{i}\hat{a}\hat{i}$
 $\hat{c}\hat{a}\hat{e}\hat{i}\hat{i}\hat{i}\hat{a}\hat{o}\hat{a}\hat{e}\hat{u}\hat{i}\hat{n}\hat{o}\hat{a}\hat{a}$, $\hat{i}\hat{u}$ $\hat{i}\hat{d}\hat{e}\hat{o}\hat{e}\hat{e}$ \hat{e} $\hat{c}\hat{a}\hat{e}\hat{e}\hat{r}\hat{a}\hat{i}\hat{e}\hat{r}$, $\hat{o}\hat{i}$ $\hat{e}\hat{o}\hat{e}\hat{o}\hat{e}\hat{e}$ $\hat{n}\hat{i}\hat{i}\hat{n}\hat{i}\hat{a}$ $\hat{a}\hat{u}\hat{a}\hat{i}\hat{d}\hat{a}$
 $\hat{e}\hat{i}\hat{i}\hat{o}\hat{a}\hat{n}\hat{n}\hat{e}\hat{i}\hat{i}\hat{a}\hat{d}\hat{a}$ – $\hat{y}\hat{o}\hat{i}$ $\hat{e}\hat{i}\hat{i}\hat{e}\hat{o}\hat{d}\hat{n}$;
- ✓ $\hat{a}\hat{e}\hat{y}$ $\hat{i}\hat{a}\hat{a}\hat{n}\hat{i}\hat{a}\hat{a}\hat{i}\hat{e}\hat{y}$ $\hat{i}\hat{d}\hat{e}\hat{a}\hat{e}\hat{a}\hat{e}\hat{o}\hat{a}\hat{e}\hat{u}\hat{i}\hat{n}\hat{o}\hat{e}$ $\hat{e}\hat{i}\hat{i}\hat{o}\hat{a}\hat{n}\hat{n}\hat{e}\hat{i}\hat{i}\hat{i}\hat{e}$ $\hat{a}\hat{a}\hat{y}\hat{o}\hat{a}\hat{e}\hat{u}\hat{i}\hat{n}\hat{o}\hat{e}$ \hat{a} $\hat{e}\hat{i}\hat{i}\hat{e}\hat{d}\hat{a}\hat{o}\hat{i}\hat{e}$
 $\hat{n}\hat{o}\hat{d}\hat{a}\hat{i}\hat{a}$ $\hat{a}\hat{i}\hat{e}\hat{x}\hat{i}\hat{a}$ $\hat{n}\hat{o}\hat{u}\hat{a}\hat{n}\hat{o}\hat{a}\hat{i}\hat{a}\hat{o}\hat{u}$ $\hat{n}\hat{i}$ $\hat{a}\hat{i}$ $\hat{e}\hat{o}\hat{i}\hat{i}\hat{n}\hat{o}\hat{u}$ $\hat{a}\hat{a}\hat{d}\hat{a}\hat{i}\hat{o}\hat{e}\hat{e}$, $\hat{e}\hat{i}\hat{o}\hat{i}\hat{d}\hat{a}\hat{y}$ $\hat{a}\hat{a}\hat{e}\hat{a}\hat{o}$ $\hat{e}\hat{i}\hat{i}\hat{o}\hat{a}\hat{n}\hat{n}\hat{e}\hat{i}\hat{i}\hat{a}\hat{d}\hat{a}$
 $\hat{c}\hat{a}\hat{u}\hat{e}\hat{u}\hat{a}\hat{i}\hat{i}\hat{u}\hat{i}$ $\hat{e}\hat{a}\hat{e}$ $\hat{i}\hat{n}\hat{n}\hat{o}\hat{a}\hat{n}\hat{o}\hat{a}\hat{i}\hat{i}$ $\hat{i}\hat{a}\hat{a}\hat{n}\hat{i}\hat{a}\hat{a}\hat{i}\hat{e}\hat{y}$ $\hat{n}\hat{o}\hat{a}\hat{a}\hat{e}\hat{e}\hat{u}\hat{i}\hat{n}\hat{o}\hat{e}$ $\hat{c}\hat{a}\hat{e}\hat{i}\hat{i}\hat{i}\hat{a}\hat{o}\hat{a}\hat{e}\hat{u}\hat{i}\hat{i}\hat{e}$ $\hat{n}\hat{d}\hat{a}\hat{a}\hat{u}$,
 $\hat{o}\hat{a}\hat{e}$ \hat{e} $\hat{a}\hat{a}\hat{d}\hat{a}\hat{i}\hat{o}\hat{e}\hat{d}\hat{o}\hat{y}$ $\hat{a}\hat{i}\hat{c}\hat{i}$ $\hat{a}\hat{u}\hat{a}\hat{i}\hat{e}\hat{a}$ $\hat{a}\hat{d}\hat{a}\hat{a}\hat{a}$ $\hat{i}\hat{d}\hat{e}$ $\hat{a}\hat{i}\hat{n}\hat{d}\hat{i}\hat{a}\hat{i}\hat{i}$ $\hat{d}\hat{a}\hat{n}\hat{o}\hat{i}\hat{d}\hat{x}\hat{a}\hat{i}\hat{e}\hat{e}$ $\hat{a}\hat{i}\hat{a}\hat{i}\hat{a}\hat{i}\hat{d}\hat{a}$.

$\hat{E}\hat{n}\hat{o}\hat{i}\hat{a}\hat{y}$ $\hat{e}\hat{c}$ $\hat{a}\hat{u}\hat{o}\hat{a}\hat{e}\hat{c}\hat{i}\hat{e}\hat{x}\hat{a}\hat{i}\hat{i}\hat{u}\hat{o}$ $\hat{i}\hat{i}\hat{e}\hat{i}\hat{x}\hat{a}\hat{i}\hat{e}\hat{e}$, $\hat{a}\hat{a}\hat{o}\hat{i}\hat{d}$ $\hat{i}\hat{d}\hat{a}\hat{a}\hat{e}\hat{a}\hat{a}\hat{o}$:

1. внести соответствующие изменения и дополнения в Гражданском Кодексе РА и закрепить понятие концессионного соглашения в главе 7 ГК РА под названием “Обязательства, вытекающие из договоров”;
2. принять специальный Закон РА "О концессионных договорах", для полноценного и всестороннего регулирования концессионных отношений в РА, имея ввиду специфичность области действия концессионного договора, его целевое назначение, особенности самого договора, связанные с его функциональным назначением, а также внести изменения в отраслевых законах, в которых будут конкретизированы положения Закона РА “О концессионных договорах” и определены особенности аспектов подлежащие обязательному регулированию в рамках концессионных отношений;
3. рассматривать концессионный договор как своеобразный гражданско-правовой механизм, который может выступить в двух разных группах гражданско-правовых договоров, в зависимости от особенностей объекта регулирования. Более того, в тех случаях, когда имеем дело со сложным объектом данного договора, состоящим из двух отдельно регулируемых элементов, он может включать в себе элементы как договоров о выполнении работ, так и договоров об оказании услуг;
4. исходя из особого порядка заключения концессионного соглашения, необходимо обратить внимание на тот факт, что подписание договора – это - как право, так и обязанность победившего в конкурсе участника.

THE LEGAL REGULATION OF THE CONCESSION CONTRACT

R E S U M E

The dissertation is dedicated to the issues of legal regulation of the concession contract. The object of the research is the concession contract as a unique type of civil law contract. The subject of the study is a public-private partnership deriving from the concession contract, peculiarities of legal provisions regulating the relations of the contract's party and the mechanisms of the realization of the provisions, as well as drawbacks, collisions arising in due course of choosing of concessionaire, contracting, executing and terminating the contract.

The author's conclusions based on the research of concession, as a system of relations and concession contract as an independent institute of law, international practice, foreign legislation and different doctrines, are as follows:

✓ the institute of concession as one of the most applicable and contemporary mechanism, is envisaged to ensure the attraction of investments into main undeveloped parts of economy and/or strategically important spheres of economy, promote the development of strategic infrastructures, thus satisfying the most prominent public interests,

✓ increasing practical significance of concessional contract as a modern legal structure requires more comprehensive theoretical studies of the subject. Along with this the domestic legislation regulating the concession relations begs for systematic improvements because of the lack of codified legal regulation and absence of the basic legislative act. Additionally, the provisions of various branch laws and sub-laws not only miss the whole spectrum of relations in the sphere of providing appropriate legal regulations but also don't reflect the nature of that relations,

✓ while regulating concession contract the fact that it is a pure civil law contract based on the complex factual composition should be taken into consideration. It also has a unique composition of entities, subject and object of regulation, concrete economic goals and is designated to implement long-term projects,

✓ one of the peculiarities of the concession contract is the subject of the contract-property that is withdrawn from the civil circulation or the type of state monopoly. This peculiarity excludes itself all the positions claiming to put the contract of concession in line with the civil contracts mediating the transmission of property or property rights,

✓ the contract of concession is classified based not only on the subject of regulation but as well on the composition of the entities, object and the order of the exploitation of the concession contract's subject,

✓ based on the international practice, foreign legislation, EU directives and case law we have concluded the best option for choosing the concession; that is tender,

✓ in order to make the environment of particular country attractive to launch concession activities there should be apt set of guaranties, that are sustainability of legislation and restitution of damages in case of early termination of the contract.

Based on the aforementioned analysis the author suggests;

1. To amend and addendum the RA Civil Code and to prescribe the notion of “Concession Contract” in the Chapter 7 of it titled “Obligations entailing from the contracts” ,

2. With regard to the peculiarities of the sphere covered by the Concession contract, the purpose of it, the features of the contract conditioned by the functional principles adopt RA Law “On concession contract” in order to provide comprehensive and complete regulation of the relations. In due course to introduce amendments to the sectoral laws concretizing the provisions of RA Law “On concession contract” to be adopted, scoping the peculiarities of the cassation relations to be subject of mandatory regulation,

3. To consider the concession contract as a unique civil law mechanism which can be included in two distinct group of civil contracts depending on the characteristics of the subject of regulation. Indeed, when dealing with the complicated object of the contract formed by two separate regulated elements, it can comprise both the elements of doing work contract and the service contract,

4. Having in regard the distinct procedure of concession contracting one should bear the fact that contracting is both a right and obligation for the winner of the tender.